ISSN 1829-0361

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

2(12)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№2(12)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№2(12)

YEREVAN 2023 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 2(12)

ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դրամագիտություն

Ալեքսանդր Հակոբյան

Արխիպելագից դեպի մայրցամաք. «Հայաստանի դրամագիտություն» հասկացության շրջանակը (*ռուս.*) 8

Ժակ Նուրպեկլեան

Հին դրամների՝ պատմական և աշխարհագրական տեղեկությունները ստուգելու ունակությունը (*անգլ.*) 23

Հաամիկ Մարգարյան

Հայաստանի անձնավորումը Պարթևական հաղթակամարի վրա՝ ըստ Օգոստոս կայսեր մ. թ. ա. 19 – 16 թթ. հաղթադրամների (*ռուս.*) 27

Մաքսիմ Եվադեան

Հայոց թագուհի Էրատոյի մասին. պատմական և դրամագիտական ուսումնասիրություն (*անգլ.*) 38

Մաքսիմ Եվադեան, Հովանն Սիմոնեան

Մարիամ Կարսեցու չհրապարակված կնիքը և Բագրատունիների տան՝ Դավիթյան ծագման հավակնությունը (*անգլ.*) 47

Շահէն Յովսէփեան

Պարսկական դրամներ՝ թողարկված Երևանում (*հայ.*) 55

Ռոբեն Վարդանյան, Արմինե Զոհրաբյան, Համլետ Պետրոսյան

Դրամներ Արցախի Տիգրանակերտի պեղումներից (*հայ.*) 74

Ռոյ Առաքելյան

Ակնարկ Տիգրան II-ի դրամական թողարկումների ժամանակագրության մասին (*անգլ.*) 87

Մեյեդ Օմիդ Մոհամմադի, Սաիդ Սոլեյմանի

Հատվել է Իրանի Հյուսիսում. «Մուհր» մակադրոշմներ արծաթե դրամների վրա (*անգլ.*) 95

Վեռա Բոյան

Հայաստանից գտնված Հնդկաստանի Մեծ մողոլների դրամները և դրանց դերը միջազգային առևտրում (*հայ.*) 106

Վլադիմիր Գորոնչարովսկի, Անդրեյ Տերեշչենկո

Տավրիկյան Խերսոնեսի հարավային արվարձանում հայտնաբերված՝ բյուզանդական կայսր Արտավազդի հազվագյուտ սեմիսի մասին (*ռուս.*) 114

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալեքսանդր Հակոբյան, Լուսինե Ղուշչյան

Մետաղադրամը իրերի վրա. Ռուսաստանի ազգագրական թանգարանի հավաքածուից չորս հայկական զարդերի դրամագիտական վերլուծություն (*անգլ.*) 122

Աստղիկ Իսրայելյան

Դրամների մոգական և գեղագիտական արժեքները (*հայ.*) 132

Արտակ Ասատրյան

Պղնձարդյունաբերությունը և պղնձագործությունը Արևելյան Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին – 20-րդ դարի սկզբին (Պատմաազգագրական համառոտ ուրվագիծ) (*հայ.*) 152

Լիլիա Ավանեսյան, Վեռա Բոյան

Գորգը և տեքստիլ ապրանքները Ռուսաստանի հետ հայ վաճառականների առևտրում 17-րդ դարի կեսին – 18-րդ դարի սկզբին (*ռուս.*) 166

Կարինե Բազեյան, Գրիգոր Աղանյան

Մետաղադրամը որպես զարդ Բարձր Հայքի և Շիրակի կանանց ավանդական հագուստի համալիրում (*հայ.*) 180

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Մանուչարյան

Դրամական անվանումների արտացոլումը հայկական վիմագրերում (*հայ.*) 190

Արմինե Ջոհրաբյան, Բորիս Գասպարյան, Անի Ադիգյոզալյան

Կշռաքար՝ հայտնաբերված Արտաշատ մայրաքաղաքի տարածքից (*հայ.*) 206

Ռոբերտո Դան, Անանարիտա Ս. Բոնֆանտի

Նախնական դիտարկումներ Հայաստանի պատմության թանգարանում պահվող Ուրարտական թագավորական թասերի նոր ուսումնասիրության մասին (*անգլ.*) 217

Հայկ Ավետիսյան, Արտակ Գնունի, Արսեն Բոբոխյան, Գագիկ Սարգսյան, Լևոն Մկրտչյան

Ճանապարհային ցանցի գործարկումը բրոնզ-երկաթեդարյան Սյունիքում՝ խոշոր բնակավայրային ագլոմերացիաների գոյության պայմաններում (*հայ.*) 225

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ

Ժիրայր Քրիստրիանեան

Ռոբերտ Վ. Էդվարդսի հայկական և հարակից մինչհետմիջնադարյան ժամանակաշրջանի դրամների հավաքածուն՝ Կիլիկիայում գտածոների վայրերի փաստագրված տվյալներով (*անգլ.*) 242

Ռոբեն Վարդանյան, Արմինե Ջոհրաբյան, Հասմիկ Հովհաննիսյան

Ոչ թանգարանային դրամագիտական թվային շտեմարան թանգարանում (*հայ.*) 260

Զարուհի Բարսեղյան

«Պահպանելով անցյալը և ներկայացնելով ներկան՝ կառուցում ենք ապագան». ՀՀ կենտրոնական բանկի այցելուների կենտրոն (*հայ.*) 267

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 271

DOI:10.56653/18290361-2023.12-225

Հայկ Ավետիսյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Երևանի պետական համալսարան
hykavetisyan@yahoo.com

Արտակ Գնունի
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Երևանի պետական համալսարան
uruatry@rambler.ru

Արսեն Բոբոխյան
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Երևանի պետական համալսարան
arsenbobokhyan@yahoo.com

Գագիկ Սարգսյան
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
gaganj@rambler.ru

Լևոն Մկրտչյան
«Պատմամշակութային արգելոց-թանգարանների
և պատմական միջավայրի պահպանություն» ՊՈԱԿ
levoncultur@gmail.com

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ ԲՐՈՆԶ-ԵՐԿԱԹԵԴԱՐՅԱՆ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ՝ ԽՈՇՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ԱԳԼՈՄԵՐԱՑԻԱՆԵՐԻ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ*

Հիմնաբառեր. Սյունիք, ճանապարհային ցանց, ամրոցներ, բազմաֆունկցիոնալ համալիր, պաշտամունքային համալիրներ, բրոնզի և երկաթի դար, գերեզմանատուն:

Մուտք

Սկսած Ք.ա. II հազ. կեսից կապված սոցիալ-մշակութային ինտեգրման գործընթացների հետ, Հայկական լեռնաշխարհում և հարևան տարածաշրջաններում ձևավորվում է բնական սահմաններով տարանջատվող առանձին շրջանների մի համակարգ: Այս համակարգն իր մեջ էր ներառում ինչպես կենտրոնական պարսպապատ բնակավայրերը, այնպես էլ շրջակա բաց բնակավայրերը, տնտեսական ենթակառույցները, տարածաշրջանային սահմանները պաշտպանող ամրոցների համակարգը, ինչպես նաև խորհրդանշական պաշտպանությունն ապահովող պաշտամունքային համալիրների համակարգը (Ավետիսյան 2014, 65):

* Ստացվել է 01.08.2023 թ., ուղարկվել է գրախոսման 02.08.2023 թ., ընդունվել է տպագրության 01.11.2023 թ.:

Բազմաֆունկցիոնալ համալիրների ձևավորումը

Նշված գործընթացների տրամաբանական վերջնարդյունքը պետք է հանդիսանար յուրատեսակ բազմաֆունկցիոնալ համալիրների ձևավորումը, որոնք, տեղադրված լինելով որոշակի ամփոփ բնաշխարհագրական միջավայրում ընդգրկում էին պաշտպանական, տնտեսական և ծիսապաշտամունքային շրջանները:

Այսօրինակ համալիրներում բնական միջավայրը հանդիսանում է յուրատեսակ առանցք, որի շուրջ և որը վերափոխելով կենտրոնանում են մշակութային լանդշաֆտի բոլոր բաղադրատարրերը: Այս համատեքստում պետք է քննարկել տվյալ տարածքի բնակլիմայական պայմանները, բնական հարստությունները, ինչպես նաև ջրի աղբյուրի հատկանիշները: Կարևոր նշանակություն ունեն բնական ճանապարհներին առնչվող տվյալները:

Սոցիալ-տնտեսական բաղադրատարրի կարևորագույն միավորը՝ բնակավայրերն են: Ընդ որում բնակավայր հասկացությունը պետք է դիտարկել համալիր՝ ներառյալ բնակավայրային ագլոմերացիայի ողջ գոտին (միջնաբերդը, «արտաքին քաղաքը», արբանյակ բնակատեղիները, կենսապահովման օբյեկտները՝ ջրանցքներ, ջրամբարներ, դաշտեր, ամրացված փարախներ):

Պատմամշակութային լանդշաֆտի երրորդ կարևորագույն բաղադրիչը՝ հոգևոր-ծիսականն է: Տվյալ խմբում պետք է միավորել ինչպես բնակավայրերում, այնպես էլ դրանցից դուրս տեղադրված ծիսապաշտամունքային համալիրները և փոքրածավալ ճարտարապետության օբյեկտները:

Լանդշաֆտային համալիրներում բոլոր նշված գործոնները սովորաբար հանդես են գալիս փոխկապակցված, միավորվելով մեկ ամփոփ տարածքում (Ավետիսյան և այլք 2019, 100–102): Ընդ որում բաղադրատարրերից յուրաքանչյուրն արժևորվում է հենց այդ կապերի շնորհիվ (Хайдегер 2008, 138–139):

Հայկական լեռնաշխարհում և հարակից շրջաններում այսօրինակ խոշոր բազմաֆունկցիոնալ համալիրներ հավաստված են մասնավորապես Արագածոտնում (Smith et al. 2009, 281, 287, 302, 309, 396), Տավուշում (Есаян 1976, 213–214), Գեղարքունիքում (Biscione et al. 2002, 80–85, 142–145), ինչպես նաև հյուսիս-արևմտյան Իրանի առանձին տարածաշրջաններում (Արդեբիլ, Սագար, Թավրիզ, Խալխալ. Մեշկիմշահար, Ահար) (Kroll 1984, 116–124)

Խոշոր բնակավայրային ագլոմերացիաների ձևավորումը Սյունիքում

Վերջին տասնամյակի հետազոտությունները ՀՀ Սյունիքի մարզում և Արցախի Հանրապետության Քաշաթաղի և Շահումյանի (Քարվաճառ) շրջաններում թույլ են տալիս հավաստել բազմաֆունկցիոնալ համալիրների գոյությունը պատմական Սյունիքում:

Ա. Պաշտպանական համակարգի ձևավորումը

Բնական է, որ նմանատիպ համալիրները կարող էին գոյատևել և մրցունակ լինել միայն կայուն պաշտպանական համակարգի առկայության դեպքում: Այն իր մեջ ներառում էր ինչպես կենտրոնական պարսպապատ բնակավայրը, այնպես էլ

դրա մատույցները պաշտպանող ամրությունների համակարգը՝ ներառյալ համեմատաբար փոքր ամրոցները և դիտակետերը, սահմանապահ ամրությունների համակարգը:

Նմանատիպ կուռ պաշտպանական համակարգի օրինակ է հանդիսանում մ. թ. ա. II – I հազ. Սյունիքի արևելքում՝ Աղավնոյի հովտում ձևավորված է բնակավայրային խոշոր ագլոմերացիան, որի կենտրոնը մ. թ. ա. I հազ. սկզբին հանդիսանում էր տարածաշրջանի վարչական և հոգևոր կենտրոն հանդիսացող Միրիկի (Աղահեճ) ամրոցը: Հուշարձանի հետազոտությունները 2016 – 2018 թթ. բացահայտեցին մի շարք վարչական (պարսպապատ դղյակ, օրթոստատ քարերով կառուցված մեծ շինություն) և պաշտամունքային (աստիճանավոր բրգաձև աշտարակը, որը պսակում էր բլրի լանջն ի վեր բարձրացող աստիճանավանդակը) համալիրներ, որոնք հստակ դիտարկվում են պարսպապատ միջնաբերդում (Սարգսյան և այլք 2022, 202 – 203):

Միրիկյան ագլոմերացիան ընդգրկում էր մի շարք ամրոցներ և ամրացված բնակավայրեր: Խոշորագույնն է Աղավնաբերդ ամրոցը, որը հանդիսանում է Աղավնո-Սթունիս միջագետքի խոշորագույն ամրոցը (Սարգսյան և այլք 2022, 58): Այս համակարգում է Մանուկ-բերդ պահակային ամրոցը: Տարածքի հաջորդ ամրացված բնակատեղին՝ Միրիկ-2-ն է, որը գտնվում է Միրիկի ամրոցից 2,5 կմ. հարավ-արևմուտք, Միրիկ գետակի ձախակողմյան լեռնաբազկի ամենաբարձր կետում և ուղիղ տեսողական կապի մեջ է Միրիկ 1 և Հերիկ ամրոցների հետ: Միրիկի ագլոմերացիայի սահմաններում են գտնվում նաև Հերիկ և Խոզնավարի լիճ ամրոցները (Սարգսյան և այլք 2022, 78):

Միրիկյան ագլոմերացիան վերահսկում էր նաև Հոչանցի ավազանը, մասնավորապես ուղիղ տեսողական կապի մեջ գտնվող Սոնասար, Տանձուտ-1, Տանձուտ-2, Հոչանց ամրոցների կողմից վերահսկվող տարածքները:

Միրիկյան ագլոմերացիայի հարավային սահմանները պաշտպանում էր Արահուծ-Ծիծեռնավանքյան ամրաշինական համակարգը, որը ներառում էր Արահուծ և Ծիծեռնավանք խոշոր ամրոցները և Դաշտաքար պահակակետը (Սարգսյան և այլք 2014, 124, 126, 166 – 169):

Հյուսիսային սահմանը՝ Աղավնոյի վերնահոսանքը, Աղավնոյի և Հոչանցի գետահովիտների միավորման վայրը պաշտպանում էին Եղնագոմեր, Սպիտակաջուր, Հակ 1 ամրոցները (Սարգսյան և այլք 2014, 154 – 155):

Այն, որ սա մի միասնական համակարգ էր, վկայում է Աղավնո-Հոչանց գետերի ջրբաժանի գագաթին կանգնած Սոնասարի ամրոցը, որն ուղղիղ տեսողական կապով հարաբերվում է Աղավնոյի հովտի Արահուծ, Ծիծեռնավանք, Սթունիս, Աղավնաբերդ, Մանուկ բերդ, Միրիկ-Աղահեճ, Միրիկ 2, Հերիկ, Աղբատխերտ ու Եղնագոմեր ամրոցների հետ և, հնարավոր է, հանդիսացել է նրանց միավորման, «կորդինացման» ու «արագ ահազանգման» հենակետը (Սարգսյան և այլք 2022, 203):

Նպաստավոր դիրքը, ռազմավարական ճանապարհների վերահսկողությունը գերակա դիրք են տալիս Միրիկյան ագլոմերացիային՝ ձևավորելով ներկայիս Քաշաթաղի շրջանի հյուսիսային հատվածում մի ամփոփ պաշտպանական շրջան,

որը փաստորեն մոտավորապես համընկնում է միջնադարյան աղբյուրների Աղահեճք գավառի տարածքի հետ (Յակոբեան 1998, 323–324):

Աղահեճքի ագլոմերացիան արևմուտքից ամենայն հավանականությամբ հարևանում էր մեկ այլ հզոր ագլոմերացիայի հետ, որը սեպագիր աղբյուրներում հիշատակվում է Ծուլուկի անվամբ: Ուրարտական սեպագրական աղբյուրները Ծուլուկի երկրում հիշատակում են Իրդուա (ամենայն հավանականությամբ Թանահատի վանքից ոչ հեռու) և Ամուշա հզոր քաղաք-ամրոցները (Арутюнян 1985, 26, 89): Հնագիտորեն հավաստված հուշարձաններից Ծուլուկիի տարածքում պետք է նշել Ջորաց քարերի հզոր պարսպապատ երկաթեդարյան բնակատեղին (Փիլիպոսյան, Ավագյան 2010, 5–10): Ակնհայտորեն Ծուլուկին կարելի է նույնացնել միջնադարյան Ծղուկ գավառի հետ: Ն. Հարությունյանի կարծիքով Իրդուան և Ամուշան կարելի է նույնացնել Օրբելյանի կողմից հիշատակվող Մուցք, Արիտ[1] և Արթեք բնակավայրերի հետ (Арутюнян 1985, 26, 89, Օրբելյան 1986, ԽԲ, ՀԴ):

Աղահեճքից հարավ՝ միջնադարյան Հաբանդ գավառի տարածքում խոշորագույն բնակավայրը Անդոկաբերդ ամրոց-բնակատեղին է, որը գոյատևել է առնվազն 2.5–3 հազարամյակ: Այդ ընթացքում նրա միջնաբերդը պատվել է չորս տարաժամանակյա պարսպաշարերով և ստորոտում կառուցվել է ընդարձակ բնակատեղի և ոչ պակաս ընդարձակ դամբանադաշտ: Ամրոցի շրջակայքում, Որոտանի ձախ և աջ ափերին տեղադրված են Անդոկաբերդ 3 և Անդոկաբերդ 2 ամրացված բնակատեղիները: Վերջինս, ինչպես նաև հարևանությամբ գտնվող ևս երկու բնակավայրերը և դրանց կից դամբարանադաշտերը համաժամանակյա են Անդոկաբերդի երկաթեդարյան շերտին: Այս նույն համատեքստում պետք է դիտարկել նաև Բարդութաղի (Բախտիյաղի) և Հալավա գյուղերի տարածքում բնակատեղիները, ինչպես նաև Անդոկաբերդից մոտ 8 կմ. գետի հունով վերև տեղադրված Մազրա և 15 կմ. ներքև գտնվող Որոտան 1 ամրոցները: Այսպիսով կարելի է ենթադրել, որ բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանում Անդոկաբերդ ամրոց-բնակատեղին հանդիսանում էր խոշոր ագլոմերացիայի կենտրոն (Սարգսյան և այլք 2022, 202–203):

Բ. Ռազմաքրմական արիստոկրատիան Սյունիքի բազմաֆունկցիոնալ համալիրներում

Տարածաշրջանի կարևոր ռազմավարական նշանակության մասին են վկայում նաև հարուստ գույքով դամբարանները, որոնք, ամենայն հավանականությամբ պատկանել էին ռազմա-քրմական արիստոկրատիայի ներկայացուցիչներին: Այսօրինակ դամբարաններից մեկը պեղվել է 1996 թ. Միրիկյան ագլոմերացիայի հյուսիսում՝ ԱՀ Քաշաթաղի շրջանի Եզնագոմեր և Արվական գյուղերի միջև: Ենջեցյալի երևելի դիրքի մասին է վկայում է ոչ միայն հարուստ գույքը (բազմաթիվ ապարանջաններ, մատանիներ, մետաղական ուլունքաշարեր, ինչպես նաև զանգվածեղ գավազանի գլխամասը), այլև զոհաբերված կենդանիների քանակը և տեսականին (չորսական ձի, ցուլ և ոչխար)[2]: Կատարվել էին նաև մարդկային զոհա-

1 Ստեփանոս Օրբելյանը Արիտ գյուղի մասին գրելիս նշում է, որ այն մոտ և սահմանակից է Տաթևի վանքին (Ս. Օրբելյան 1986, Կ):

2 Բնորոշումները՝ Ն. Մանասերյանի:

բերություններ: Բացի 40 – 50 տ. տղամարդու մնացորդներից (հավանաբար դամբարանի տիրոջ), այստեղ մասնատված վիճակում գտնվել են հավանաբար զոհաբերված 30 – 40 տ. կնոջ և տղամարդու, 20 – 30 տ. կնոջ և երկու երեխաների կմախքներ (Գնունի, Խաչատրյան 2010, 55 – 59)[3]: Սպիտակաջուր ամրոցի տարածքում ավերված դամբարանից ի հայտ են եկել տարբեր տեսակի երեք երասանակներ, ձիասանձի այլ բաղադրատարրեր:

Այս նույն համատեքստում պետք է դիտարկել նաև Սյունիքյան տարածաշրջանի հարավում Ողջի գետի միջնահոսանքում գտնվող Կերենի դամբարանադաշտի N 64 այսպես կոչված «քրմական» թաղումը, որտեղ հայտնաբերվել են արարողակարգային գավաթներ, կենդանակերպ անոթ, մարդակերպ արձան (Գնունի 2006, 215 – 217), N 97 դամբարանը ծիսական անոթներով, բրոնզե մեդալյոնով և նվիրատվական թիթեղներով (Գնունի և այլք 2015, 25 – 27), ինչպես նաև ավերված դամբարաններից հայտնաբերված երկաթյա սուրը, բրոնզե ճակատակալը և դրվագված բրոնզե գոտին (Սիմոնյան և այլք 2007, 29, 40, 41): Քրմական արիստոկրատիայի զատման մասին են վկայում նաև Սյունիքի դամբարանադաշտերից հայտնաբերված ծիսական իրերը (Մաճ, Խնածախ, Խմձորեսկ, Հարժիս, Շիկահող) (Xnkikyan 2002, 50, 57, 69, 81, 87):

Գ. Տնտեսական ենթակառույցների գործարկումը

Միրիկյան ագլոմերացիայի և նմանատիպ համակարգերի խոշոր դերակատարման մասին է վկայում զարգացած տնտեսական ենթակառուցվածքը: Միրիկյան ագլոմերացիայում այն ներառում էր ինչպես բնակավայրի անմիջական հարևանությամբ տեղադրված անասնապահական համալիրները (օր.՝ Միրիկ 1 ամրոցի հարևանությամբ մոտ 40 հա. տարածք պարփակող քարե ցանկապատը), այնպես էլ բարձր լեռնային արոտավայրերում գտնվող անասնապահական համալիրները: Վերջիններս ներկայացված են երեք տիպով. ամրոցներ, որտեղ ընդարձակ տարածքներ են հատկացված անասնափարախների համար (Խոզնավարի լիճ, Եզնագոմեր, Հակ-1), ամրացված անասնափարախներ (Միրիկ-4, Հակ-2, «Միջանցք») և բնակավայր-ամառանոցները (Այլախ լիճ, Այլախ (քարտեզ տեղամաս):

Միրիկ-Աղահեճքի և Անդոկաբերդի նման խոշոր պոլիսանման համակարգերի սահմաններում կարող էին ձևավորվել առանձին տնտեսական ենթաշրջաններ: Այդպիսի ենթաշրջանների թվին է պատկանում Աղավնոյի և Հոչանցի գետահովիտների միացման վայրում գտնվող Եզնագոմերի ենթաշրջանը, որը ինքնահոս ոռոգվող մոտ 200 հա. տարածք է: Տարածքի պաշտպանությունն իրականացնում են մի շարք ամրոցներ (Սպիտակաջուր, Եզնագոմեր, Հակ-1):

Անհամեմատ ավելի խոշոր է Ալ լճերի համակարգը, որը տեղադրված է ալպիական անասնապահության համար խիստ նպաստավոր միջավայրում: Այստեղ հավաստված են բազմատեսակ տնտեսական և ծիսապաշտամունքային համալիրներ: Համակարգի մատույցներում հավաստված են «Ձվածիր» և Ծառ ամրոցները:

3 Բնորոշումները՝ Ռ. Մկրտչյանի:

Միևնույն ժամանակ, յուրացվող տարածաշրջանի մեծ չափերը հուշում են, որ այն կարող էր օգտագործվել մի քանի համայնքի կողմից համատեղ (Avetisyan et al. 2021, 211–212):

Զարգացած տնտեսական կյանքի մասին բացի ճարտարապետական համալիրներից վկայում են նաև դամբարաններից հայտնաբերված իրերը, որոնք կարող էին ծառայել դրամական փոխարժեք (ապրանքային փողեր): Որպես այդպիսիք մասնավորապես կարող էին օգտագործվել զանգվածեղ ապարանջանները (Եզնագոմեր, Կապանի Շահումյանի դամբարանադաշտ): Այս իրերի կենտրոնացումը մանավանդ նկատելի է Կապանի Շահումյանի դամբարանադաշտում: Հատկանշական է, որ երկու դեպքում (V տեղամասի N 6 դամբարան և VI տեղամասի N 8 դամբարան) ապարանջաններն ամրացված էին բրոնզե լարով, ինչը մատնանշում է, որ դրանք չէին օգտագործվել որպես զարդ[4]: Ապրանքափոխանակման տեսանկյունից պետք է դիտարկել նաև Եզնագոմերի բաց բնակատեղիից հայտնաբերված կշեռքի նժարը (ՔԵԹ ի/հ 41/2):

Ճանապարհային ցանցի գործարկումը և դրա պաշտպանությունը

Ձևավորված այսպիսի պոլիսանման համալիրների միջև կապը պետք է երաշխավորված լիներ կայուն և հուսալի ճանապարհային ցանցի առկայությամբ, որի պաշտպանությունն անհրաժեշտ էր ապահովել ինչպես իրական (պաշտպանական համակարգ), այնպես էլ խորհրդանշական (ծիսապաշտամունքային համալիրներ) տեսակետից: Ամենայն հավանականությամբ արդեն մ.թ.ա. 2–1-ին հազ. գործարկվել էին մի շարք հանգուցային կապուղիներ, որոնք ապահովում էին կայուն և հուսալի կապը Սյունիքի տարածաշրջանի տարբեր հատվածների միջև: Ճանապարհները կապում էին ինչպես առանձին տարածաշրջաններ, այնպես էլ՝ հարթավայրային և նախալեռնային շրջանները բարձր լեռնային ալպիական գոտիների հետ, ինչը կապված էր մ.թ.ա. 2–1-ին հազ. յայլաղային անասնապահության զարգացման հետ (Սարգսյան և այլք 2022, 205):

Զարգացած ճանապարհային ցանցի առկայության մասին են վկայում ոչ միայն հնագիտական, այլև սեպագրական տվյալները. օր.՝ Օձասարի արձանագրությունը (Իգումնով և այլք 1997, 193–202):

Ճանապարհային կայուն ցանցի առկայության մասին կարող է վկայել թաղումներում գրեթե նույնական գույքի առկայությունը (հմմտ. ԱՀ Քաշաթաղի շրջանի Վարդուտի և Սիսիանի տարածաշրջանի Ախլաթյանի դամբարանները) (հմմտ.՝ Գնունի, Խաչատրեան 2003, 255, 274, Հասրաթյան 1985, 193, 194), զանգվածեղ ելուստներով նույնատիպ գավազանների գլխամասերը Եզնագոմերից (ՔԵԹ ի/հ 20/1) և Հադրութից (Հմմտ.՝ Գնունի 2006 a, 82–83, Ивановский 1911, таб. XV, Минкевич-Мустафаева 1959, 67):

4 Կապանի Շահումյանի դամբարանադաշտի 2012 և 2018 թթ. պեղումները՝ Ա. Գնունու:

Ա. Ճանապարհներին տեղադրված պաշտպանական օբյեկտները

Սյունիքի կենտրոնական և արևելյան շրջանները կապող ճանապարհների թվին կարելի է դասել Խնածախ-Ծիծեռնավանք ճանապարհը, որի անվտանգությունն ապահովում էին Խնածախ[5], Արահուծ, Ծիծեռնավանք ամրոցները:

Արևելք-արևմուտք ճանապարհային ցանցում իր դերակատարումն ուներ նաև Վերիշեն-Խոզնավար-Միրիկ ճանապարհը, որի երկայնքով տեղադրված են Իշակ Մեյդան, Ձագեձոր-1, Ձագեձոր-2, Խոզնավարի լիճ, Միրիկ-2, Միրիկ-1 ամրոցները:

Այս երկու զուգահեռ ընթացող ճանապարհները փաստորեն դուրս էին գալիս դեպի Աղավնոյի հովիտ, որտեղ Սթունիսի և Աղավնոյի միախառնման վայրում գետի աջ ափին տեղադրված Սթունիս, Աղավնաբերդ, Մանուկ բերդ և ձախ ափին՝ Տանձուտ 1 և Տանձուտ 2 ամրոցները պարփակում էին մոտ 20 հա. տարածք զբաղեցնող յուրատեսակ մի բացատ, որը հավանաբար, ունեցել է հավաքատեղիի կամ բաշխիչ կայանի նման մի գործառույթ: Այստեղից անասնահոտերը Սթունիս-Աղավնաբերդ, Միրիկ-Աղահեճ-Հերիկ-Աղբատխերտ-Բերդիկ, ամրոցների վերահսկողությամբ գնում էին դեպի յայլաղային արոտավայրեր, ուր բաշխվում էին Միրիկ 2, Միրիկ 4, Հակ 1, Հակ2, Եզնագոմեր, Միջանցք և նմանատիպ այլ ամրացված ամրոց-փարախների միջև (Սարգսյան և այլք 2022, 201 – 202):

Դեպի Սյունյաց լեռնաշղթայի Իշխանասարի հարավային ալպյան մարգագետինները տանող ուղիների վրա են տեղակայված Աղավնոյի գետահովտի Արահուծի, Սթունիսի, Աղավնաբերդի, Միրիկ-Աղահեճի, Հերիկի, Աղբատխերտի, Սպիտակաջրի ամրոցները: Դեպի Սպիտակաջուր Սյունիքի կենտրոնական շրջաններից էր տանում նաև Սառնակունքից ընթացող ճանապարհը, որի վերջնակետն էին հանդիսանում Հակ-1, Եզնագոմեր և Սպիտակաջուր ամրոցները (Սարգսյան և այլք 2022, 201 – 202):

Սյունիքի կենտրոնական և արևելյան շրջանները Արաքսի հովտի հետ կապող կարևոր ուղղություններից մեկը ուրվագծվում է ԱՀ Քաշաթաղի շրջանի հարավային հատվածում: Որոտանի գետահովտով դեպի Հագարիի գետահովիտը ընկած է Մազրա, Անդոկաբերդ, Անդոկաբերդ 2, Որոտան 1 ամրոցների շղթան:

Որոտան-Բարկուշատ գետահովտով անցնող հաղորդակցման ուղին, ըստ ամենայնի, հնագույններից է, որը միանալով Արաքսի հունով ձգվող ճանապարհին կապում է Միլի դաշտի հնագույն բնակավայրերը Սյունիքի նախալեռնային գոտու համաժամանակյա հուշարձանների հետ: Բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջաններում այս ճանապարհի անվտանգությունն ապահովում էին Մազրա և Որոտան 1 ամրոցները (Սարգսյան և այլք 2022, 201 – 202):

Սյունիքի հարավային սահմանով էր ընթանում Արաքսի երկայնքով ձգվող ճանապարհը[6]: Այս ճանապարհը, որի վրա, ի դեպ, գտնվում էին նաև Կուլապի

---

5 Հուշարձանների Պետական ցուցակ 8 Սյունիքի մարզ, 44 գ. Խնածախ, 1 ամրոց Բինա:

6 Այս ճանապարհի գոյության մասին հին շրջանում կարելի է եզրակացնել Սեբեոսի մի ակնարկից. գրելով արաբական արշավանքի մասին նա Նախիջևանը և Խրամ քաղաքը

աղի հանքերը, ամենայն հավանականությամբ, շարունակվում էր և դեպի արևմուտք՝ Կաղզվան (Вейденбаум 1888, 413) և դեպի արևելք, որտեղ Արաքսի գետանցման մոտ տեղադրված Հորադիզ ամրոց-բնակավայրը[7]:

Սյունիքի կենտրոնական հատվածը Նախիջևանի հետ կապող մի քանի ճանապարհ կար, որոնք վկայված են միջնադարյան և նոր շրջանի աղբյուրներում. (Евецкий 1835, 200, Տէր-Ավետիքեան 1904, 96՝): Այդպիսի ճանապարհներից էին Մարտիրոս-Նախիջևան, Շաղատ-Անգեղակոթ-Նախիջևան (ըստ՝ Հասրաթյան 1985, 70) կապուղիները: Այստեղ հավաստված են մի շարք ամրոցներ և բաց բնակատեղիներ[8]: Հարժիս-Բիչանակ ճանապարհին հավաստված են Մթնաքար ամրոցը[9], Հարժիսի ամրացված բնակատեղին[10]:

Սյունիքի հյուսիսային սահմանով էր անցնում Սոթք-Քարվաճար ճանապարհը: Այստեղ կարևորագույն դեր էր կատարում Սոթքը: Սոթքը՝ Գեղարքունիքից Արցախ և Ուտիք տանող մի շարք ճանապարհների կարևոր խաչմերուկ էր (Բարխուդարյան 1973, 7): Այս համակարգում պետք է դիտարկել Սոթքի ամրոցների համակարգը, Այրքի, Նորաբակի (Bisione et al. 2002, 67,72, 76, 85), Ծովաթաղի (Դանիելյան, 2022, 229) Ծառի[11] ամրոցները: Այս ամրացված ճանապարհը փաստորեն համընկնում է Դվին-Պարտավ ճանապարհի մի հատվածի հետ (Մանանդյան 1936, 190–193): Բացառված չէ, որ այս ճանապարհին էր միանում Վայոց ձորից՝ Եղեգիսից դեպի Ալ լճերի ավազան տանող ճանապարհը: Հավանաբար հենց այս ճանապարհն ի նկատի ունեն միջնադարյան աղբյուրները՝ նկարագրելով Ավարայրից հետո հայկական զորքի նահանջը դեպի Արցախ (Օրբելյան 1986, ԺԹ):

Բ Ճանապարհների խորհրդանշական պաշտպանությունը

Արևելք-արևմուտք ճանապարհները

Պաշտամունքային բազմաթիվ օբյեկտներ են հավաստված Սյունիքի կենտրոնական շրջաններից դեպի արևելք տանող ճանապարհներին: Այսպես, Վայոց ձորից Գեղարքունիք տանող ճանապարհին են գտնվում Սելիմի լեռնանցքում տե-

---

նշում է Աղվանից աշխարհից հետո. «Իսկ այն զաւրն, որ ի կողմանս Այրարատեան, եհար սրով մինչև ի կողմանս Տայոց, Վրաց և Աղուանից, առ գաւէր և զգերութիւն, ու եկն էանց ի Նախճաւան» (Սեբեոս, ԽԳ): Ճանապարհի այլ հիշատակումների համար հմմտ. Աբրահամ Կրետացի, XXII, 10–25, XLII, 1–20, XLVIII, 5–20: Voyages 1730, 120–130, Никитин 1882, 130–132, Rubruk 1900, 266–273, Манандян 1954, 202):

7 Հորադիզի ամրոց բնակավայրում դիտարկումները կատարել է ՊՄԺ գ/հ կենտրոնի արշավախումբը (ղեկ.՝ Հ. Սիմոնյան): Նույն կերպ պաշտպանված էին դեպի Արաքսի աջ ափ տանող ճանապարհները (Kroll 1984, 45):

8 Հուշարձանների Պետական ցուցակ 8 Սյունիքի մարզ, 13 գ.Անգեղակոթ, 2–3 բնակատեղի, 8 Սյունիքի մարզ, 13 գ. Անգեղակոթ, 21 Գոդեձոր հնավայր, 1. Ներքին Գոդեձոր բնակատեղի, 8 Սյունիքի մարզ, 69 գ. Շաղատ, 1–4 Շաղատ 1–4 ամրոցներ:

9 Հետազոտությունները՝ Գ. Սարգսյանի, Ա. Բորոխյանի, Ա. Գնունու:

10 Հետազոտությունները՝ Հ. Ավետիսյանի, Ա. Բորոխյանի, Ա. Գնունու:

11 Հետազոտությունները՝ Գ. Սարգսյանի, Ա. Բորոխյանի, Ա. Գնունու, Հ. Դանիելյանի:

ղադրված վիշապ-քարակոթողները, մենհիրները, բաժակատիպ փորվածքներով քարերը: Այս նույն ճանապարհին դեպի Գեղհովիտ են տեղադրված նաև Քարի ձի տեղամասի հուշարձանները. վիշապ-քարակոթողները և մենհիրները, Սևասարի դամբարանադաշտը և ժայռապատկերները: Այս ճանապարհն ակտիվորրեն շահագործվում էր նաև Վանի թագավորության ժամանակաշրջանում նկատի ունենալով Գետափի ամրոցների համակարգը (Melkonyan et al. 2010, 90 – 97), ինչպես նաև Գեղհովիտի ուրարտական ժայռափոր դամբարանը (Փիլիպոսյան, Մկրտչյան 2001, 15):

Բազմաթիվ պաշտամունքային օբյեկտներ տեղադրված են դեպի Ալ լճեր տանող հիմնական ճանապարհներին. Գեղարքունիքի կողմից դա բազմաթիվ քարակույտ-հարթակներն են որոնք տեղադրված են Մաքենիսից դեպի Ալ լճեր ձգվող կիկլոպյան պարսպի երկայնքով: Վայոց ձորից Արփայի ակունքներով դեպի Ալ լճեր տանող ճանապարհի ծիսապաշտամունքային հուշարձաններից պետք է նշել Մուրադ Սարի ժայռապատկերները, քարակույտ-հարթակները և Արփայի ակունքում կանգնեցված վիշապ քարակոթողները (Avetisyan et al. 2021, 211 – 212):

Սառնակունք-Հակ ճանապարհին ևս տեղադրված են բազմաթիվ դամբարանադաշտեր և ժայռապատկերներ[12]:

Վերիշեն-Խոզնավար-Միրիկ ճանապարհների սրբագործված օբյեկտների համակարգում հանդես են գալիս մի շարք դամբարանադաշտեր. օր.՝ Խոզնավարի Բազարխանայի դամբարանադաշտը մարդակերպ կոթողով և ծիսական հարթակ-զոհասեղանով, Իշակ Մեյդանի բնակատեղիի կենտրոնում գտնվող զոհասեղանը, Խոզնավարի լճի վիշապ-քարակոթողը: Այս համատեքստում առանձնակի նշանակություն ունի Միրիկ-4-ի այսպես կոչված «քարտեզը»՝ ժայռաքանդակ, որին ամենայն հավանականությամբ փորագրված են դեպի բարձր լեռնային արոտավայրեր տանող ուղիները (Ավետիսյան և այլք 2019 a, 6):

Խնածախ – Ծիծեռնավանք և Տեղ-Աղավնո-Ծիծեռնավանք ճանապարհների ծիսապաշտամունքային հուշարձաններից հարկ է նշել Խնածախի դամբարանադաշտերը (Xnkikyan 2002, 90)[13], դամբանաբլուր-կրոմլեխներ Տեղ և Աղավնո գյուղերի միջև (Խնածախ-5): Այս նույն ճանապարհին է գտնվում Ծիծեռնավանքի ամրոցին կից դամբարանադաշտը և զոհասեղանը, Ծիծեռնավանք գյուղում կոնաձև մշակված ժայռը (Սարգսյան և այլք 2022, 124 – 125):

Կենտրոն-արևմուտք ճանապարհները

Սյունիքում և Վայոց ձորում ձևավորվել էր մենհիրների շարքերի ցանց, որը մի քանի ուղղություններով ձգվում էր Հարժիսից (Avetisyan et al. 2017, 1 – 11) դեպի Եղեգնաձոր: Սա մի համակարգ է, որը ճյուղավորումներով անցնում է գրեթե ողջ Վայոց ձորի տարածքով (Խաչիկ, Ամաղու, Եղեգնաձոր, Կարմիր Վանք)[14]: Մյուս

12 Հետազոտությունները Ա. Գնունու, Գ. Խաչատրյանի:

13 Հուշարձանների պետական ցուցակ 8, Սյունիքի մարզ 44 գ. Խնածախ 1.1, 8 – 10 դամբարանադաշտեր:

14 Դատելով նշված վայրերի աշխարհագրությունից՝ կարելի է ենթադրել, որ հաղորդման հեղինակները ի նկատի ունեն ոչ թե Նախիջևանի տարածքում գտնվող Կարմիր վանքը,

կողմից այս համակարգը շարունակվում էր դեպի Նախիջևան Բիչանակի լեռնանցքով (Բարխուդարյան, 1960, 81):

Ելնելով այս հանգամանքից՝ Ֆ. Բայերնը, իսկ հետագայում նաև Ս. Բարխուդարյանը որակում էին դրանք որպես ճանապարհային քարեր (Протоколы..., 1879, 34, 41, Ф. Байерн, 1871, 308 – 309): Հաշվի առնելով, որ մենաքարերի ուղղվածությունն իսկապես համընկնում է ճանապարհի ուղղության հետ, ինչը հաստատվում է միջնադարում այստեղ քարավանատների կառուցմամբ, դրանք հնարավոր է ընկալել որպես ճանապարհային ուղենիշներ, սակայն դա միջնադարում երկրորդական օգտագործման արդյունք չէ, քանի որ վիշապ – քարակոթողները և մենաքարերը տեղադրված են in situ վիճակում արհեստական քարահողային թմբիկներին, օղակված կրոմլեխով: Հարժիսյան դամբարանադաշտերի համատեքստում կարելի է դիտել նաև Հարժիսի ընդարձակ դամբարանադաշտը (Xnkikyan 2002, 67):

Սյունիքը Նախիջևանի տարածաշրջանի հետ կապող Անգեղակոթի ճանապարհին ևս տեղադրված են մի շարք դամբարանադաշտեր, մասնավորապես՝ Անգեղակոթի Ս. Վարդան տեղամասի դամբարանադաշտը (Xnkikyan 2002, 67):

Նախիջևանի հետ Վայոց ձորը կապող այս կարևոր կապուղիները և դրանց հետագա շարունակությունը դեպի Գեղարքունիք Սելիմի ճանապարհով օգտագործվում էին նաև ուրարտական ժամանակաշրջանում, ինչի վկայություն են հանդիսանում այս տարածքում տեղաբաշխված ժայռափոր համալիրները (Dan et al. 2022, 302 – 306):

Կենտրոնական ուղղություն

Հյուսիս-հարավ առանցքին գտնվող ճանապարհների հիմնական առաքելությունը՝ Արարատյան դաշտի, Սյունիքի կենտրոնական և հարավային շրջանների կայուն կապի ապահովումն էր: Այս կապուղու շահագործման մասին վկայում են նաև Մալիշկայի ուրարտական դամբարանը, Արևիսի և Թանահատի արձանագրությունները:

Առ այսօր օգտագործվող Շինուհայր-Տաթև-Աղվանի-Մաճ-Կապան ճանապարհի երկայնքով տեղադրված են բազմաթիվ ծիսապաշտամունքային համալիրներ. Շինուհայրի ժայռային աշտարակը[15], Մաճի և Աղվանիի դամբարանադաշտերը (Xnkikyan 2002, 49, 53), Կապանի Շահումյանի դամբարանադաշտը: Թերևս այս նույն համատեքստում պետք է դիտարկել Խոտի հզոր բնակատեղին՝ բլրի գագաթին տեղադրված տաճարական կառույցով և կից դամբարանադաշտով: Բնակավայրի ամրացվածությունը, կանոնավոր հատակագիծը թույլ են տալիս ենթադրել, որ այն հանգուցային դեր էր կատարում համակարգում (Xnkikyan 2002, 82)[16]:

Ճանապարհային ցանցի զարգացման արդյունք էին հանդիսանում ակտիվ

այլ Արենիի եկեղեցին, որն առ այսօր տեղի բնակչության շրջանում հայտնի է այդ անվամբ (Протоколы..., 1879, 34, 41, Ф. Байерн, 1871, 308 – 309):

15 Հետազոտությունները՝ Լ. Մկրտչյանի, Գ. Սարգսյանի, Ա. Գնունու:

16 Այս նույն տրամաբանությունը գործում է հյուսիս-արևմտյան Իրանում՝ դեպի Արաքսի աջ ափ տանող տարածքների խորհրդանշական պաշտպանությունն ապահովելիս: Այսպիսի դամբարանադաշտեր տեղադրված են Արդեբիլ-Սարաբ ճանապարհին (Kroll 1984, 45, 48, 49):

զարգացող միջտարածաշրջանային մշակութային կապերը: Սրա ապացույցն են հանդիսանում բազմաթիվ իրանական տարրեր, որոնք դիտարկվում են հարավային Սյունիքի հուշարձաններից հայտնաբերված խեցեղենում: Ջուգահեռները նկատելի են նաև թաղման ծեսում: Որոշ կերենյան թաղումներում (NN 74, 90, 92, 97, 103) ննջեցյալը տեղադրված է ոչ թե մայր հողի, այլ հողե միջնաշերտի վրա (Ա. Գնունի և այլք 2011, 54–55, աղ 2, նկ. 2): Նշված ծեսը հատուկ չէ հայաստանյան հուշարձաններին, սակայն ունի իր արարողակարգային-ծիսական հիմնավորումը Ավեստայում (Авеста. Видевдат. Фархад. VIII 8):

Եզրակացություններ

Այսպիսով, ուշ բրոնզի և երկաթի դարերում խոշոր բնակավայրային ագլոմերացիաների ձևավորման հետ մեկտեղ ի հայտ է գալիս նաև դրանց կապն ապահովող համեմատաբար հուսալի ճանապարհների ցանց, որի գործարկումը երաշխավորում էր տարածաշրջանների բնականոն զարգացումը, նպաստում միջտարածաշրջանային առևտրի ու կոոպերացիայի զարգացմանը և համադաշնությունների կազմավորմանը: Ճանապարհների անվտանգությունը ապահովում էր ամրաշինական կայուն համակարգը, որն ընդգրկում էր տարածքը վերահսկող արագ արձագանքման կենտրոնները, ճանապարհների առանձին հատվածները վերահսկող ուղեկալ ամրոցները և դիտակետ-աշտարակները: Միևնույն ժամանակ ճանապարհների խորհրդանշական պաշտպանությունն ապահովում էին դրանց երկայնքով տեղադրված դամբարանադաշտերը, հարթակ զոհասեղանները, մենհիրների շարքերը:

Ճանապարհ	Ամրոցներ	Դամբարանադաշտեր	Սրբատեղիներ
Խնածախ-Ծիծեռնավանք	Խնածախ, Արահուծ, Ծիծեռնավանք, Դաշտաքար	Խանածախի դամբարանադաշտեր, Խնածախ 5 դամբարանադաշտ, Ծիծեռնավանքի դամբարանադաշտ	Ծիծեռնավանքի հարթակ-զոհասեղան, Ծիծեռնավանքի կոնաձև մշակված ժայռ
Խոզնավար-Միրիկ	Իշակ Մեյդան, Ձագեձոր 1, Ձագեձոր 2, Խոզնավարի լիճ, Միրիկ 2, Միրիկ 1	Միրիկ 2 դամբարանադաշտ, Միրիկ 3 դամբարանադաշտ, Խոզնավարի Բազարխանայի դամբարանադաշտ	Իշակ Մեյդանի զոհասեղան, Ձագեձորի մենհիրներ, վիշապ-քարակոթող, Միրիկ 1-ի ծիսապաշտամունքային համալիրը:
Սառնակունք-Հակ-Եզնագոմեր	Հակ1, Սպիտակաջուր, Եզնագոմեր	Սպիտակաջրի և Եզնագոմերի դամբարանադաշտեր	Ժայռապատկերներ Սպիտակաջուր-Հակ ճանապարհին
Որոտան-Հագարի	Մազրա, Անդոկաբերդ 1, Անդոկաբորդ 2, Որոտան	Որոտանի (Քաշաթաղի շրջան) դամբարանադաշտ	Կվադրալիտներ Որոտանի (Քաշաթաղի շրջ.) դամբարանադաշտում

Արաքսի ճանապարհ	Հորադիզ, Ղարաքյոփակ-թեփե Հադրութ	Ղարաքյոփակթեփեի դամբարանադաշտ, Դամբարանադաշտեր Ջրակնում:	
Շաղատ-Անգեղակոթ-Նախիջևան	Գոդեձոր, Շաղատ 1 – 4	Շաղատի դամբարանադաշտեր, Անգեղակոթի դամբարանադաշտ, Գութանասարի դամբարանադաշտ, Որոտանի (Սիսիանի տարածաշրջան) դամբարանադաշտ	Շաղատի ժայռապատկերներ Գոդեձորի ժայռապատկերներ, Անգեղակոթի վիշապանման կոթող
Շինուհայր-Տաթև-Կապան	Խատի ամրոց, Կապանի Շահումյանի ամրացված բնակատեղի	Խոտի դամբարանադաշտ, Մաճի դամբարանադաշտ, Աղվանիի դամբարանադաշտ, Տաթևի դամբարաններ:	Շինուհայրի ծիսական աշտարակ
Հարժիս-Բիչանակ	Մթնաքար, Հարժիս	Հարժիս	Վիշապ-քարակոթողներ, Հարժիսի մենաքարեր, Բիչանակի մենաքարեր, Հարժիսի մարդակերպ արձաններ,
Սոթք-Քարվաճառ	Սոթք, Այրք, Նորաբակ, Ծովաթաղ, Ծառ	Սոթքի, Ծառի դամբարանադաշտեր	Մաքենիս-Ալ լճեր հատվածի քարակույտ-հարթակներ
Եղեգիս-Ալ լիճ		Մուրադ սարի դամբարանադաշտեր Ալ լճերի դամբարանադաշտեր	Մուրադ սարի քարակույտ-հարթակներ, Մուրադ սարի ժայռապատկերներ, Ալ լճերի ժայռապատկերներ, Ալ լճերի քարակույտ-հարթակներ, վիշապ-քարակոթողներ
Վայոց ձոր-Սելիմ-Գեղհովիտ	Գետափի ամրոցներ, Գեղհովիտի Ալբերդ և Ջոջ Կող Ամրոցներ	Սևասարի դամբարանադաշտ, Գեղհովիտի ժայռափոր դամբարան	Սելիմի վիշապ Սելիմի զոհասեղան Քարե ձի վիշապ և մենհիրներ, Սևասարի ժայռապատկերներ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սկզբնաղբյուրներ

ԱԲՐԱՀԱՄ ԿՐԵՏԱՑԻ 1973 – Աբրահամ Կրետացի, Պատմություն, քննական բնագիր, ռուս. թարգմ., առաջաբան և ծանոթ. Ն. Ղորղանյանի, Երևան, 1973:

ՍԵԲԵՈՍ 1939 – Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն, աշխ. Ստ. Մալխասեանցի, Երևան, 1939:

ՕՐԲԵԼՅԱՆ 1986 – Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմ. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986:

RUBRUK 1900 – Rubruk W., The Journey of William Rubruk to the Eastern Part of the World (1253 – 1255), trans., ed., by W. W. Rockhill, London, 1900.

VOYAGES 1730 –Voyages d'un Missionaire de la Compagnie de Jesus en Turquie, en Perse, en Armenie, en Arabie, en Barbarie, Paris, 1730.

АВЕСТА 1994 – Авеста. Видевдат. Фархад. "Вестник Древней Истории", Москва, 1994, № 1, сс. 238 – 248.

Ուսումնասիրություններ

ԱՎԵՏԻՍՅԱՆ 2014 – Ավետիսյան Պ., Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. XXIV – IX դդ. (սոցիալ-մշակութային ձևափոխումների դինամիկան ըստ հնագիտական տվյալների), պ.գ.դ. … գիտ. զեկուցում, Երևան, 2014:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԵՎ ԱՅԼՔ 2019 – Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բոբոխյան Ա., Մկրտչյան Լ., Ավետիսյան Ն, Լանդշաֆտի հնագիտական ուսումնասիրության առանձնահատկությունները, «Պատմություն և Մշակույթ», 2019, № 1, էջ 95 – 106:

ԱՎԵՏԻՍՅԱՆ և ԱՅԼՔ 2019 – Ավետիսյան Հ., Սարգսյան Գ., Գնունի Ա., Բոբոխյան Ա., Միրիկի հուշարձանախմբի պեղումների նախնական արդյունքները, «Մեսրոպ Մաշտոցի Համալսարանի Լրատու», 2019, № 2, էջ 4 – 20:

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ 1960 – Բարխուդարյան Ս., Դիվան հայ վիմագրության, II, Գորիսի Սիսիանի և Ղափանի շրջաններ, Երևան, 1960:

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ 1973 – Բարխուդարյան Ս., Դիվան հայ վիմագրության IV. Գեղարքունիք – Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, Երևան, 1973:

ԳՆՈՒՆԻ, ԽԱՉԱՏՐԵԱՆ 2003 – Գնունի Ա., Խաչատրեան Գ., Դաշտային հետազօտութիւններ Շալուա գետի աւազանում և Հոչանցի ձախ ափին, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 2003, № 1–12, էջ 251–281:

ԳՆՈՒՆԻ 2006 – Գնունի Ա., Կերենի «քրմական» դամբարանի պեղումները, «Բանբեր Երևանի Համալսարանի», Երևան, № 3, էջ 215 –218:

ԳՆՈՒՆԻ 2006 – Գնունի Ա., Առաջնորդի, զորահրամանատարի և քրմի գործառույթների համատեղումը Հին Հայաստանի տարածքում, «Հայկական Բանակ», Երևան, 2006, № 4, էջ 81 – 86:

ԳՆՈՒՆԻ, ԽԱՉԱՏՐՅԱՆ 2010 – Գնունի Ա., Խաչատրյան Գ., Նորահայտ հուշարձաններ Աղավնո գետի վերնահոսանքում, «Հուշարձան» տարեգիրք, 2010, Գիրք Զ, էջ 53 – 66:

ԳՆՈՒՆԻ ԵՎ ԱՅԼՔ 2011 – Գնունի Ա., Խաչատրյան Գ., Վարդանյան Գ., Թադևոսյան Ա., Հնագիտական ուսումնասիրություններ ԼՂՀ Քաշաթաղի շրջանում, «Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում, 2011 – 2012 թթ.», Ստեփանակերտ, 2011, էջ 41 – 70:

ԳՆՈՒՆԻ ԵՎ ԱՅԼՔ 2015 – Գնունի Ա., Աղիկյան Լ., Խաչատրյան Գ., Վարդանյան Գ., Թադևոսյան Ա., Կերենի 2011 – 2012 թթ. պեղումների հիմնական արդյունքները, «Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում, 2011 – 2012 թթ.», Ստեփանակերտ, 2015, էջ 20 – 35:

ԴԱՆԻԵԼՅԱՆ 2022 – Դանիելյան Հ., Արեգունու և Սևանի լեռնաշղթաների արևելյան ու արևմտյան լանջերի բրոնզ-երկաթեդարյան ամրաշինական համակարգը, «Ծովային Հայաստան, Ուդուրի-Էթիունի երկրի հնագիտական ժառանգությունը», Երևան, 2022, էջ 224 – 237:

ԻԳՈՒՄՆՈՎ ԵՎ ԱՅԼՔ 1997 – Իգումնով Վ., Կարագյոզյան Հ., Հմայակյան Ս., Օձասարի սեպագիր արձանագրությունը, «Պատմաբանասիրական Հանդես», № 1, էջ 193 – 202:

ՀԱՍՐԱԹՅԱՆ 1985 – Հասրաթյան Մ., Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985:

ՄԱՆԱՆԴՅԱՆ 1936, Մանանդյան Հ., Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Երևան, 1936:

ՅԱԿՈԲԵԱՆ 1998 – Յակոբեան Ա. Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1998, № 1 – 12, էջ 269 – 324:

ՍԱՐԳՍՅԱՆ ԵՎ ԱՅԼՔ 2014 – Սարգսյան Գ., Գնունի Ա., Հակոբյան Ա., Սյունիքի արևելյան սահմանների պաշտպանական համակարգի ձևավորումը մ. թ. ա. II – I հազարամյակներում, «Վեմ» հանդես, Երևան, 2014, № 3, էջ 147 – 170:

ՍԱՐԳՍՅԱՆ ԵՎ ԱՅԼՔ 2022 – Սարգսյան Գ., Գնունի Ա., Մկրտչյան Լ., Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի ամրոցները, Երևան, 2022:

ՍԻՄՈՆՅԱՆ ԵՎ ԱՅԼՔ 2007 – Սիմոնյան Հ., Սանամյան Հ., Գնունի Ա., Արցախի և ազատագրված շրջանների 1990 – 2005 թթ. հնագիտական ուսումնասիրությունների հիմնական արդյունքները, ցուցահանդեսի ցանկ, Երևան, 2007:

ՏԷՐ-ԱՎԵՏԻՔՅԱՆ 1904 – Տէր-Ավետիքեան Մ., Դարալագեազ կամ Վայոց Ձոր, «Մուրճ», Թիֆլիս, 1904, № 12, էջ 96 – 106:

ՓԻԼԻՊՈՍՅԱՆ, ՄԿՐՏՉՅԱՆ 2001 – Փիլիպոսյան Ա., Մկրտչյան Ռ., Գեղհովիտի Վան-Տոսպյան (ուրարտական) ժայռափոր դամբարանը, Հայաստանի հնագիտական հուշարձանները, 18/IV, Երևան, 2001:

ՓԻԼԻՊՈՍՅԱՆ, ԱՎԱԳՅԱՆ 2010 – Փիլիպոսյան Ա., Ավագյան Ա., Ջորաց քարեր, Երևան, 2010:

AVETISYAN et al. 2017 – Avetisyan H., Gnuni A., Bobokhyan A., Danielyan H., Menhirs of Harzhis, Bridging Times and Spaces, "Papers in Ancient Near Eastern Mediterranean and Armenian Studies", Oxford, 2017, pp. 1 – 10.

AVETISYAN et al. 2021 – Avetisyan H., Gnuni A., Bobokhyan A., Sargsyan G., Mkrtchyan L., Davtyan A., Archaeological Landscapes of l Lakes, "Archaeology of Armenia in Regional context", Yerevan, 2021.

BISCIONE et al. 2002 – Biscione R., Hmayakyan S., Parmegiani N.2002, The North-Eastern Frontier: Urartians and Non-Urartians in the Sevan Lake Basin, I, The Southern Shores, Documenta Asiana, VII, Roma, 2002.

DAN et al. 2022 – Dan R., Gasparyan B., Petrosyan A., Vitolo P., Aghaian S. Recent Investigations of Rock – cut Structures og Armenia Ծովային Հայաստան, Ուդուրի-Էթիունի երկրի հնագիտական ժառանգությունը, Երևան, 2022, էջ 314 – 326:

MELKONYAN et al. 2010 – Melkonyan H., Karapetyan I., Yengibaryan N. 2010, The Excavations of the newly found Fortress in Getap, Aramazd, Armenian Journal of Near Eastern Studies, V/2, pp. 90 – 97.

SMITH et al. 2009 – Smith A., Badalyan R., Avetisyan P., The Foundation of Research and Regional Survey in the Tsaghkahovit Palin, Armenia, Oriental Institute Publications, Chicago, 2009.

XNKIKYAN 2002 – Xnkikyan O., Syunik during Bronze and Iron Ages, Barrington, 2002.

АРУТЮНЯН 1985 – Арутюнян Н., Топонимика Урарту, Ереван, 1985.

БАЙЕРН 1871 – Байерн Ф., 1871, О древних сооружениях на Кавказе, "Сборник Сведений о Кавказе", I, Тифлис, 1871, сс. 306 – 325.

ВАЙДЕНБАУМ 1988 – Вейденбаум Е, Путеводитель по Кавказу, С. Петербург, 1988.

ЕВЕЦКИЙ 1835 – Евецкий О., Статистическое описание Закавказского края, С. Петербург, 1835.

ЕСАЯН 1976 – Есаян С., Древняя культура племен Северо-восточной Армении, Ереван, 1976.

ИВАНОВСКИЙ 1911 – Ивановский А. По Закавказью, Материалы по археологии Кавказа, Москва, 1911.

МАНАНДЯН 1954 – Манандян Я. О торговле и городах Армении в связи мировой торговлей дрених времен, Ереван, 1954.

МИНКЕВИЧ – МУСТАФАЕВА 1959 – Минкевич-Мустафаева Н., Об археологических находках из села Доланлар, Материальная культура Азербайджана, 1, Баку, 1959, сс. 50 – 70.

НИКИТИН 1882 – Никитин К. Город Нахичевань и Нахичеванский уезд, Сборник материалов по описанию местностей и племен Кавказа, II), Тифлис, 1882, сс. 109 – 142 .

ПРОТОКОЛЫ 1879 – Протоколы подготовительного комитета V археологического съезда в Тифлисе, под. ред. И. Манасветова, Москва, 1879.

ХАЙДЕГЕР 2005 – Хайдегер М., Исток художественного творения, Москва, 2005.

Հապավումներ

ՔԵԹ	Քաշաթաղի երկրագիտական թանգարան
ի/հ	ինվենտար համար

Айк Аветисян
Доктор исторических наук, профессор
Ереванский государственный университет
hykavetisyan@yahoo.com

Артак Гнуни
Кандидат исторических наук, доцент
Ереванский государственный университет
uruatry@rambler.ru

Арсен Бобохян
Кандидат исторических наук, доцент
Институт археологии и этнографии НАН РА
Ереванский государственный университет
arsenbobokhyan@yahoo.com

Гагик Саргсян
Институт археологии и этнографии НАН РА
gaganj@rambler.ru

Левон Мкртчян
ГНКО "Служба по охране историко-культурных заповедников-музеев и исторической среды"
levoncultur@gmail.com

ФУНКЦИОНИРОВАНИЕ ДОРОЖНОЙ СЕТИ В СЮНИКЕ В УСЛОВИЯХ СУЩЕСТВОВАНИЯ КРУПНЫХ ПОСЕЛЕНЧЕСКИХ АГЛОМЕРАЦИЙ В ПЕРИОД БРОНЗЫ И ЖЕЛЕЗА

Ключевые слова: Сюник, дорожная сеть, крепости, многофункциональный комплекс, культовые комплексы, эпоха бронзы и железа, могильник.

Начиная со 2-го тыс. до н.э. в Армянском нагорье и, в частности, в Сюник-Арцахском регионе формируется система регионов, разделенных естественными границами. Указанные системы поселеней включали центральное фортифицированное поселение, поселения-спутники открытого типа, хозяйственную и идеологическую инфраструктуру.

Таким образом, формируется многофункциональный комплекс, включающий фортификационные системы, хозяйственные и культовые комплексы.

Естественно, что функционирование таких комплексов было бы невозможно без существования стационарных путей сообщения. Дороги соединяли не только отдельные районы Сюникского региона, но и были проложены по направлению к высокогорным пастбищам.

Защита дорог осуществлялась как постройкой крепостей и дозорных башен вдоль дорог, так и в смысле сакральной защиты: т.е. расположения могильников и культовых объектов вдоль дорог.

Функционирование разветвленной дорожной сети обеспечивало жизнеспособность крупных поселенческих агломераций, а также способствовало формированию союзов и конфедераций.

Hayk Avetisyan
Doctor of Historical Sciences, Professor
Yerevan State University
hykavetisyan@yahoo.com

Artak Gnuni
PhD, Assistant Professor
Yerevan State University
uruatry@rambler.ru

Arsen Bobokhyan
PhD, Assistant Professor
Institute of Archaeology and Ethnography of NAS RA
Yerevan State University
arsenbobokhyan@yahoo.com

Gagik Sargsyan
Institute of Archaeology and Ethnography of NAS RA
gaganj@rambler.ru

Levon Mkrtchyan
"*Service For The Protection Of Historical Environment and Cultural Museum-Reservations*" *SNCO*
levoncultur@gmail.com

THE FUNCTIONING OF THE ROAD NETWORK IN SYUNIK CONDITIONED BY EXISTENCE OF LARGE SETTLEMENT AGGLOMERATIONS DURING THE BRONZE AND IRON AGES

Keywords: Syunik, road network, fortresses, multifunctional complex, cult complexes, Bronze and Iron Ages, cemeteries.

Since the 2nd millennium BC, in the Armenian Highlands and, in particular, in the Syunik-Artsakh region, a system of regions separated by natural boundaries is being formed. These settlement systems included a central fortified settlement, satellite settlements of an open type, economic and ideological infrastructure.

Thus, a multifunctional complex was being formed, including fortification systems, economic and religious complexes.

Naturally, the functioning of such complexes would be impossible without the existence of stationary means of communication. The roads connected not only separate areas of the Syunik region, but were also laid in the direction of high mountain pastures.

The protection of the roads was carried out both by the construction of fortresses and watchtowers along the roads, and in the sense of sacred protection: i.e., location of cemeteries and places of worship along the roads.

The functioning of an extensive road network ensured the viability of large settlement agglomerations, and also contributed to the formation of unions and confederations.

Հայկ Ավետիսյան, Արտակ Գնունի, Արսեն Բոբոխյան,
Գագիկ Սարգսյան, Լևոն Մկրտչյան

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ ԲՐՈՆԶ - ԵՐԿԱԹԵՂԱՐՅԱՆ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ ԽՈՇՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ԱԳԼՈՄԵՐԱՑԻԱՆԵՐԻ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Նկ. 1. Աղավնոյի հովտի ամրոցների քարտեզ

Նկ. 2. Աղավնոյի հովտի ամրոցների տեսողական կապը

Նկ. 3. Միրիկ 1 ամրոցի ամրոցանիպտ բլուրը

Նկ. 4. Միրիկ 1 ամրոցի փաճարական կառույցը

Նկ. 5. Եզնագոմերի մեծ դամբարանը

Նկ. 6. Գավազանի գլխամաս Եզնագոմերի մեծ դամբարանից

Նկ. 7. Կշեռքի նժար Եզնագոմերի բաց բնակատեղիից

Նկ. 8. Փաթեթավորված ապարանջաններ Կապանի Շահումյանի դամբարանադաշտի V տեղամասի N 3 դամբարանից

Նկ. 9. Հարժիս-Տաթև ճանապարհը

Նկ. 10. Մենհիր Հարժիսում

ԱՀԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ